ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Նրանց հետեւից) Արջաամիս շամփրեցէք: (Աւելի բարձր) Հա՜մմմ: Գոոմշամիս խաշեցէք: (Աւելի բարձր) Հա՜մմմ: Ուղտամիս տապակեցէք: Հա՜մմմ…

ՆԱԶԱՐ.– (Ամեն նոր շեշտին վեր է թռչում տեղից։)

ՀՍԿԱՆԵՐ.– Շամփրո՜ւմ ենք, ապեր, տապակո՜ւմ ենք: (Ընկնում են ծառերի մէջ եւ հսկայական շահումներով, լայն քայլերով ու արագ սկսում են ծառերն արմատահան անել, մտնում են ամրոցը, դուրս են բերում ահացին թաբախներ, դանակներ, վերցնում են ահագին քարեր, դնում իրար կողքի խարոյկի համար):

ՆԱԶԱՐ.– (Սարսափից շփոթուած) Հսկա ախպե՞ր…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Անհանգիստ) Հա՜ա՜մ…

ՆԱԶԱՐ.– (Նրանից վախենալով լուռ նստում է տեղը։)

ՓԵՐԻՇԱՆ.– (Հանկարծ սայթաքելով ընկնում է մի ծառի վրայ, ծառը ջարդ-ւում է եւ ճիւղերը թափւում են Նազարի առջեւ, Նազարը վեր է թռչում, Խոզենին ծիծաղում է, միւսները վարակւում են, հանկարծ փռթկում է նաեւ Ղռռոբոդան։ Սկսւում է անզուսպ ծիծաղի մի փոթորիկ։ Նազարը վեր է կենում տեղից եւ սկսում է դարձեալ անհանգիստ անցուդարձ անել։)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Նորից նետուելով) Քաջ տղերք են, մեծաւոր, լաւ կռուել գիտեն:

ՆԱԶԱՐ.– Ձենները թող կտրեն:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ձեններդ կտրեցէք,

ՀՍԿԱՆԵՐ.– (Լռում են։ Միայն Խոզենին ծիծաղը չի կարողանում զսպել, հսկաները վրայ են թափւում եւ սկսում են թակել) Պրծա՛ւ, պրծա՛ւ: (Շարունակում են իրենց գործը։)

ԽՈԶԵՆԻ.– (Ուզում է պոկել Նազարի գլխավերեւը կախուած ծառի մեծ ճիւղը։)

ՓԵՐԻՇԱՆ.– (Արգելելով նրան) Մի՛ պոկի, մի պոկի՛, փտած է:

Հսկաները Խոզենուն նետում են դէպի խորքը։

ՀՍԿԱՆԵՐ.– (Վերջացնում են ծառ պոկելը եւ սկսում են պղինձները դնել խարոյկի վրայ։)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Նկատելով Նազարի մտահոգ դէմքը) Սիրտդ նեղանում է: Հա՜ամ… Մի արջ բերե՞մ պատռես:

ՆԱԶԱՐ.– (Վախեցած) Չէ՛, հարկաւոր չէ: